ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք
Հասցե-գ.Ղուրսալի (093586276)
Էլ. փոստ ghursali.lori@mta/gov.am

054/ 291
24.12.2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ի պատասխան 2020 թվականի հունվարի 20-ի թիվ 01/107.3/00404-2020 հանձնարարականի Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կայանալիք արտահերթ նիստի օրակարգը և քննարկվելիք նախագծերը:

Առդիր՝ 3 թերթ:

Ղուրսալի համայնքի

ղեկավար՝ Մ.Մինասյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ * ՂՈՒՐՍԱԼԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 00180 954

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ղուրսալի	Ավագանու արտահերթ նիստ	25.12.2020թ.	11:00	**Ղուրսալի համայնքապետարան**

ՆԱԽԱԳԻԾ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(զեկ. ՄՀԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել Ղուրսալի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 18-ի արտահերթ նիստի օրակարգը

1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը. համայնքի ավագանին՝

ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Ղուրսալի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և վարձակալության իրավուքով տրամադրելուն՝

Լոտ 1. 06-068-0908-0002 ծածկագրով 0.24788 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, աճուրդ վաճառքի մեկնարկային գինը սահմանել 75 000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

25 տարով վարձակալությամբ տրամադրվող՝

Լոտ 2. 06-068-0103-0018 ծածկագրով 1.1627 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայրը, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10 000/տաս հազար/ ՀՀ դրամ:

2.Աճք ու վաճառքի մեկ լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 %:

3.Վարձակալության տրամադրման մեկ լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 15 %:

4.Համայնքի ղեկավար Մ.Մինասյանին ապահովել հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: